...ՔԱՆԻ ՈՐ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ Է

Մեր թղթակիցը Մոսկուայից հաղորդում է

Յուլիսի 17ին կինոկենտրոնի շէնքում կայացաւ Լեռնային Ղարաբաղ այցելած Սախարովեան Կոնզրէսի պատուիրակութեան անդամների մամլոյ ասուլիսը։ Պատուիրակութեան կազմում էին՝ անգլիական պառլամենտի լորդերի պալատի փոխ նախագահ լեդի Կարոլին Քոքսը (Մեծ Բրիտանիա), Մարդու իրաւունքների միջազգային լիգայի գործադիր տնօրէն Ֆելիցիա Դ. Հայերը (ԱՄՆ), խորհրդաամերիկեան կոմիտէի տնօրէն Ուիլիամ Զ. Միլլերը (ԱՄՆ), Մոթ Նորթոնը(ԱՄՆ), Լորդերի պալատի անդամ Մալքոլմ Փիրսոնը (Մեծ Բրիտանիա), Դէվիդ Լէոպոլդը (ԱՄՆ), Շին-Իչի Մասահակին (Ճապոնիա), Ալեքսէյ Սեմիոնովը (ԱՄՆ), խորհրդատու Ռոբերտ Արսենալթը (ԱՄՆ)։

Մամլոյ ասուլիսից յետոյ մեր թղթակից Արթուր Տէրեանը հանդիպեց պատուիրակութեան անդամ Ալեքսէյ Սեմիոնովին (ԱՄՆ)։

Հարց.-Պարոն Սեմիոնով, ինչպէ՞ս էք դուք դասակարգում մարդու իրաւունքների խախտումներն Արցախում։ Եւ ինչպիսի՞ն է այդ դասակարգումը՝ ընդհանո՞ւր, թէ՞ իւրայատուկ հենց այդ տարածքաշրջանի համար։

Պատ.-Հարցն անչափ բարդ է, որովհետեւ Լեռնային Ղարաբաղում իրադրութիւնը եզակի է։ Բոլոր դիտորդների համար միանգամայն պարզ է, որ կայ, այսպէս կոչուած, ներքին բախման իրավիճակ։ Այդպիսի իրավիճակի համար գոյութիւն ունեն օրէնքներ, որոնք կարգաւորում են մարդու իրաւունքները եւ նուազագոյն երաշխիքներ ապահովում։ Բայց որպէսզի իրադրութիւնը դասակարգուի որպէս օրինական, անհրաժեշտ է, որ Խորհրդային Միութիւնը, այսինքն Մոսկուայի կառավարութիւնը ընդունի, որ ինքը ներքին բախման գօտի ունի։ Բայց նա դա չի ընդունում, հետեւապէս անչափ դժուար է օրինականութեան տեսակէտից մօտենալ իրադրութեանը։ Այնտեղ ռազմական դրութիւն է մտցուած եւ յաճախ, երբ մարդու իրաւունքի հարցեր են քննարկւում, ապա ՕՄՕՆը, զինուորական ներկայացուցիչները, Ղարաբաղեան կազմկոմիտէի ներկայացուցիչները վկայակոչում են այն հանգամանքը, թէ, քանի որ ռազմական դրութիւն է, ուրեմն ամեն ինչ կարելի է։ Դա ամենեւին էլ այդպէս չէ։ Օրինակ, ռազմական դրութեան ապահովման համար ուժի օգտագործումը միանգամայն յստակ է կարգաւորւում։ Կայ ուժի կիրառման, օրինապահ պաշտօնեայ անձի պահւածքի կանոնագիր, որը կարգաւորում է ուժի գործադրումը եւ արգելում բնակչութեան համար վտանգ ներկայացնող ուժի գործադրումը անգամ ռազմական դրութեան պայմաններում։

Հարց.-Փաստօրէն, ինչպէս ես հասկացայ, դժուա՞ր է ինչ-որ կերպ դասակարգել ձեր տեսածը։

Պատ.-Չէի ասի, թէ դա անչափ դժուար է։ Կան միանգամայն որոշակի բաներ։ Ասենք, ամեն ինչից զատ, ցանկացած պայմաններում արգելւում են հանրագումարային պատիժները։ Խօսքը գիւղերի տեղահանութեան մասին է։ Եթէ գիւղի ողջ բնակչութեան վտարում է իրականացւում, ուրեմն դա բռնագաղթ է, հանրագումարային պատիժ։ Իսկ դա ցանկացած իրադրութիւնում արգելուած է։ Միակ բացառութիւնը, դա բնակչութեան ժամանակաւոր տեղափոխութիւնն է՝ նրա անվտանգութիւնն ապահովելու նպատակով։ Դրա համար էլ ես միշտ զարմանում էի, երբ միլիցիայի ադրբեջանցի սպաները հաւատացնում էին, իբր բնակչութեան կամաւոր արտագաղթ է տեղի ունենում։ Չէ՞ որ միանգամայն պարզ էր, որ դա այդպէս չէ։ Փաստաթղթերը, որոնք մեզ էին ներկայացուած եւ վկայում էին, որ մարդիկ գիւղերից կամաւոր էին դուրս եկել՝ բացարձակապէս ոչ մի իրաւաբանական ուժ չունեն, քանի որ հասցէագրուած են ոչ թէ վարչական անձի, այլ Ադրբեջանի Կոմկուսի կենտկոմի քարտուղար Պոլեանիչկոյին։ Այսինքն այդ փաստաթղթերը որեւէ բանի հիմք հանդիսանալ չեն կարող։

Հարց.-Մամլոյ ասուլիսում բազմիցս ընդգծուեց, որ ուղեւորութեան մասնակիցները չեն պատրաստւում որեւէ քաղաքական գնահատական տալ, բայց ամեն դէպքում ղարաբաղեանի նման ցանկացած խնդիր կարող է լուծւել քաղաքական միջոցներով, այդ թւում եւ զինուորական ուժի կիրառումով։ Տուեալ խնդրի լուծման ինչպիսի՞ քաղաքական միջոցներ էք դուք տեսնում։

Պատ.-Քաղաքակիրթ կը լինի այն միջոցը, երբ կողմերը համաձայնութեան կը գան, որ մարզից անյապաղ հեռանայ ՕՄՕՆը, որովհետեւ այդ կազմակերպութեան առկայութեամբ բանակցութիւններ վարելը անիմաստ է։ Մտցւում են իրաւապահ ուժեր...

Հարց.-Ինչպիսի՞։

Պատ.-Չէզոք։ Կամ միջազգային, կամ Միացեալ Ազգերի Կազմակերպութեան, կամ ինչ-որ երրորդ կողմի։ Այդպիսի ուժ կարող է լինել անգամ խորհրդային բանակը, որովհետեւ Ադրբեջանից դուրս տեղաւորուած խորհրդային բանակը բաւականին չէզոք է։ Այդ յետոյ, երբ տեղակայւում է Ադրբեջանում, Ղարաբաղում, բոլոր կառուցուածքների տարրալուծման արդէն գոյութիւն ունեցող պայմաններում փաստօրէն կաշառւում է։ Իսկ եթէ, օրինակ, դուրս հանփ ՕՄՕՆը եւ մտցուեն խորհրդային նոր զօրքեր՝ բնակչութեան հանդէպ չէզոքութիւն պահելու կոնկրետ առաջադրանքով, ապա միգուցէ կ'ապահովուի կարգուկանոնը, եւ կողմերը կարող են բանակցութիւններ սկսել։

Հարց.-Այսինքն, դուք գտնում էք, որ որեւէ բարդ խնդիր այստեղ չկայ եւ ինչ-որ նոր բան մտածելու հարկ չկա՞յ։

Պատ.-Կարծում եմ, որ այդ մեխանիզմները կան, եւ ես նոյնիսկ կ'ասէի, որ բախումը որոշ քաղաքական ուժերի կողմից չափազանցուած է, որովհետեւ եղած պրոբլեմները այդպիսի լայն չափեր չպիտի ընդունէին։

Հարց.-Նշանակում է, ինչ-որ մէկը շահագրգռուած է, որպէսզի այսպիսի չափ լինի եւ հակամարտութիւնը շարունակուի այսքան երկա՞ր։

Պատ.-Կարծում եմ...